

ԿՐՏԱԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՄԻԶԱՆՁՆԱՅԻՆ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ\*

Իննա Մկրտչյան

Միջանձնային հարաբերությունը համարվում է գործունեության ոչ միայն անհրաժեշտ բաղադրամաս, որի իրականացումը ենթադրում է մարդկանց փոխազդեցությունը, այլ նաև միաժամանակ մարդկանց ընդհանրության նորմալ գործընթացի պարտադիր պայման: Օպտիմալ միջանձնային հարաբերությունները համարվում են մարդու մոտ հոգեկան պրոցեսների, հոգեկան հատկանիշների և ֆունկցիաների լիարժեք ձևավորման գրավական, ինչպես նաև անձի զարգացում:

**Միջանձնային հարաբերություններ** հասկացությունը «Պրակտիկ հոգեբանի բառարանում» սահմանվում է երկու տեսանկյունից. սուբյեկտիվ՝ որպես մարդկանց միջև փոխկապակցված ապրումների ամբողջական համակարգ, և օբյեկտիվ՝ ըստ որի՝ այն մարդկանց բնավորության և ընդունակությունների փոխազդեցությունն է, որն արտահայտվում է նրանց համատեղ գործունեության և հաղորդակցման մեջ, ինչպես նաև դիրքորոշումների, սպասումների, կարծրատիպերի համակարգ է, որի միջոցով մարդիկ ընկալում և գնահատում են մեկը մյուսին [1]:

Խորհրդային հոգեբանության մեջ բազմաթիվ կարծիքներ կան այն մասին, թե միջանձնային հարաբերությունները մարդկանց կենսագործունեության իրական համակարգում ինչ տեղ են զբաղեցնում: Առաջին հերթին անհրաժեշտ է առանձնացնել **Վ.Ն.Մյասիշչևին**, ով գտնում էր, որ անձնավորությանը բնորոշող ամենակարևոր հատկությունը նրա վերաբերմունքն է այլ մարդկանց նկատմամբ [2]:

Վերլուծելով միջանձնային հարաբերությունների տեղը սոցիալ-հոգեբանական գրականության մեջ՝ **Գ.Մ.Անդրևան** նշում է, որ դրանք ուսումնասիրվում են հասարակական հարաբերությունների համակարգի հարաբերակցությամբ, դրվում են նրանց հիմքում կամ ամենավերին շերտում: Ըստ նրա՝ «միջանձնային հարաբերությունների բնույթը կարող է ձիշտ հասկացվել, եթե դրանք դիտարկվեն որպես հարաբերությունների յուրահատուկ տեսակներ, որոնք առաջանում են սոցիալական հարաբերությունների շրջանակներում [3]:

**Ն.Ն.Օբոզովը** նշում է, որ միջանձնային հարաբերությունները միշտ սուբյեկտ-սուբյեկտային կապերն են: Դրանք բնորշվում են մշտական փոխադարձությամբ և փոփոխականությամբ (որը պայմանավորված է երկու կողմերի ակտիվությամբ): Ելնելով այնպիսի չափանիշներից, ինչպիսին են՝ հարաբերությունների խորությունը, ընտրողականությունը, գործառույթները, նա առաջարկում է միջանձնային հարաբերությունների հետևյալ դասակարգումը. **ժանդություն, ընկերական, բարեկամական, սիրային, ամուսնական և դեստրուկտիվ**: Անձնավորության կառուցվածքում նրան բնութագրող մի քանի մակարդակներ առանձնացնելով (տեսակային, սոցիալ-մշակութային, հոգեբանական, անհատական)՝ նա նշում է, որ միջանձնային փոխհարաբերությունների

\* Հոդվածն ընդունվել է 16.03.2015:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ մանկավարժության և հոգեբանության ամբիոնը:

տարբեր տեսակները ենթադրում են մարդու որոշակի հատկությունների ընդգրկում շփման մեջ [4]:

Միջանձնային հարաբերությունների հարցն այսօր առավել քան արդիական է դպրոցական տարիքում, քանի որ ուսումնական գործունեության յուրաքանչյուր շրջան բնութագրվում է նոր հարաբերությունների ձևավորմամբ, զարգացմամբ, այդ հարաբերություններին ներկայացվող նորանոր պահանջներով, ընկերների ընտրության հարցում այլ մոտեցումներով և այլն: Յուրաքանչյուր տարիքային շրջանում, երբ անձը անցնում է զարգացման նոր մակարդակի, նրա մոտ ձևավորված հոգեբանական նորագոյացությունները նոր բովանդակություն են հաղորդում նրա միջանձնային հարաբերությունների տարբեր ոլորտներին: Յուրաքանչյուր նոր փուլում վերակառուցվում են միջանձնային հարաբերությունները ընտանիքում, ընկերական շրջապատում, դպրոցական կոլեկտիվում և ուսուցիչների հետ շփումներում:

Ժամանակակից դպրոցում զգալիորեն բարդացել են միջանձնային շփումների ոլորտները, փոխվել է երեխաների վերաբերմունքը ուսուցիչների, ուսումնական գործունեության և ընդհանրապես ողջ կրթական համակարգի նկատմամբ, ինչը պահանջում է վերակառուցել դպրոցականին և նրա անձին ներկայացվող պահանջների համակարգը, նոր հիմքերի վրա դնել երեխա-մեծահասակ փոխհարաբերությունները:

Միջանձնային հարաբերությունների դիմամիկան տարիքային կոնկրետ շրջաններում ունի իրեն բնորոշ հոգեբանական առանձնահատկությունները, մասնավորապես, կրտսեր դպրոցական տարիքում միջանձնային հարաբերությունները մեծամասամբ սահմանափակվում են ուսումնական գործունեությամբ:

Սկսած կրտսեր դպրոցական տարիքից՝ դպրոցականը սկսում է ընկերներ ձեռք բերել: Սկզբնական ժամանակահատվածում այդ շփումը սահմանափակվում է դպրոցով: Սակայն աստիճանաբար այն առավել է կարևորվում և դառնում է դպրոցական կյանքի առանցքային ոլորտներից մեկը:

Կրտսեր դպրոցական տարիքը ընդգրկում է երեխաների կյանքի 6-11 տարեկան հասակը, որը համապատասխանում է տարրական դասարաններում ուսուցմանը: Կարելի է ասել, որ արդեն 6,7 տարեկանում երեխաների մեծ մասն ունենում է ֆիզիկական և հոգեբանական պատրաստվածության բավարար մակարդակ դպրոցական ուսուցմանն անցնելու համար: Այնուամենայնիվ դպրոց գնալը ձգնաժամային իրադարձություն է համարվում, քանի որ գրեթե ամբողջապես փոխվում է երեխայի կենսաձևը, նրա հանդեպ վերաբերմունքները, սպասումները, պահանջները: Սա պահանջում է ծնողների և ուսուցիչների աշխատանքի այնպիսի կազմակերպում, որը թույլ կտա հնարավորինս սահուն ձևով հաղթահարելու առաջ եկող դժվարությունները և դրական դիրքորոշում ձևավորելու բուն ուսումնական գործունեության նկատմամբ: Հատկապես նշանակալի է դառնում ուսուցչի դերը, քանի որ երեխան սկսում է նրան դիտել որպես ամենախելացի, ամենակարող, ամենազետ անձնավորություն [5]:

Կրտսեր դպրոցական տարիքը կարևորվում է նրանով, որ երեխան ներգրավվում է սոցիալական հարաբերությունների նոր ոլորտի մեջ, փոխվում է նրա դիրքը, նա ձեռք է բերում նոր իրավունքներ ու պարտավորություններ, որոշակի սոցիալական կարգավիճակ, մասնավորապես դպրոցականի կարգավիճակը, ընդլայնվում են նրա սոցիալական կապերը, միջանձնային շփումների շրջանակը: Կրտսեր դպրոցականի համար միջանձնային շփումների կարևոր ոլորտ են ինչպես ընտանիքը, այնպես էլ դասարանական կոլեկտիվը և հատկապես ուսուցիչը, որը հանդես է գալիս որպես բացառիկ ռեֆերենտային անձնավորություն:

Կապված երեխայի նոր առաջատար գործունեության և սոցիալական կարգավիճակի հետ՝ նոր բնույթ են ստանում նաև նրա միջանձնային հարաբերությունները:

Փոխվում է հարաբերությունների ոճը **ընտանիքում**: Նախադպրոցական տարիքում երեխային սովորաբար շատ մեղմ են մոտենում, նա չունի յուրահատուկ պարտավորություններ, նրա գործունեությանը հստակ պահանջներ չեն ներկայացվում: Իսկ դպրոց հաճախելուն զուգընթաց երեխան ստանձնում է դպրոցականի դերին համապատասխան վարք: Փոխվում են խոսխոսման և պատժի համակարգերը, չափանիշները: Ծնողները սկսում են մեծ ուշադրություն դարձնել ուսումնական հաջողություններին և դրան համապատասխան փոխվում է վերաբերմունքը երեխայի նկատմամբ: Սա կրտսեր դպրոցականներին ստիպում է կարևորելու ուսումնական գործունեությունը որպես մեծահասակի հավանությանը արժանանալու հիմնական միջոց: Ընդլայնվում են ծնողների հետ շփման ոլորտները, սկսում են մեծ տեղ զբաղեցնել ուսումնական հարցերն ու հետաքրքրությունները: Այլ կերպ կարելի է ասել, որ ընտանիքում ևս երեխայի հարաբերությունները սկսում են պայմանավորվել դպրոցական ուսուցմամբ [6]:

Ակնհայտ է, որ **կրտսեր դպրոցականների միջանձնային հարաբերությունների յուրահատուկ ոլորտ է դառնում դպրոցը, ուսումնական գործունեությունը, դասարանական կոլեկտիվը**, ընդհանրապես ամեն բան, ինչը որևէ կերպ կապվում է նրա նոր սոցիալական կարգավիճակի հետ:

Միջանձնային հարաբերությունների կառուցվածքի յուրահատուկ մեխանիզմների ձևավորումը ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ ուսումնական գործունեությունը շրջանակներում տեղի է ունենում անձնավորության և կոլեկտիվի զարգացում:

Դասարանական կոլեկտիվն զգալիորեն ներգործում է երեխաների սոցիալական հաղորդակցման կարողությունների ձևավորման վրա: Այստեղ երեխաները իրենց համար նոր տիպի հարաբերություններ են հաստատում՝ ելնելով նոր, իր բովանդակությամբ նախկին կարգավիճակներից տարբեր՝ դպրոցականի կարգավիճակից: Դասարանական կոլեկտիվում երեխան հասարակական հարաբերությունների փորձ է ձեռք բերում, նրա մոտ աստիճանաբար սկսում են ձևավորվել այնպիսի սոցիալ-հոգեբանական հատկություններ, ինչպիսին սիրալիրությունն է, այլ մարդուն հասկանալու կարողությունը, նրա հետ փոխգործունեության մեջ մտնելու ունակությունը: Ջարգանում են երեխայի զգացմունքները, հուզական արձագանքման կարողությունները, ինքնավերահսկողությունը: Այս շրջանում է ձևավորվում անձի կարևորագույն հատկություններից մեկը՝ ռեֆլեքսիայի կարողությունը: Երեխան աստիճանաբար կարողանում է գիտակցել իր հոգեվիճակները, դրդապատճառները, վերաբերմունքները: Նա նաև սկսում է իրեն գիտակցել որպես միջանձնային հարաբերությունների սուբյեկտ, հասկանում է, որ ընդգրկված է սոցիալական հարաբերությունների որոշակի համակարգում, որտեղ իրենից պահանջվում են շատ կոնկրետ վարքային դրսևորումներ[7]:

Կրտսեր դպրոցական շրջանում տարիքին զուգընթաց՝ փոխվում է միջանձնային հարաբերությունների բովանդակությունը: Առաջին դասարանցիները դեռևս իրենց կոլեկտիվի մաս չեն զգում, նրանք եսակենտրոն են, գործում են միմյանցից անջատ և անկախ: Առաջնային խնդիր հանդիսանում է դպրոցական պարտականությունների լավ կատարումը: Այնուամենայնիվ պետք է նշել, որ, չնայած իր եսակենտրոնությանը, երեխան կարող է օգնել դժվար վիճակում հայտնված հասակակցին, ինքն էլ օգնություն խնդրել: Հետաքրքիր է, որ սովորաբար օգնության համար դիմում են այն երեխային, ում զուգել է ուսուցիչը :

Երկրորդ դասարանում ավելի շատ քանակական փոփոխություններ են տեղի ունենում, ձևավորվում են նախադրյալներ ավելի լայն սոցիալական շփումների համար,

աստիճանաբար սկսում են գնահատվել համադասարանցիների անձնային որակները, հարաբերությունները կառուցվում են դրանց նկատմամբ վերաբերմունքի հիման վրա:

Երրորդ դասարանում կարելի է փաստել, որ անցում է կատարվում միջանձնային շփումների նոր մակարդակի: Եթե նախկինում երեխայի համար միևնույն էր, թե ուսուցիչը նկատողություն կանի հասակակիցների ներկայությամբ կամ բացակայությամբ, ապա երրորդ դասարանում հրապարակային նկատողությունը ավելի է խոցում երեխային, նրա հուզական բարեհարմարության վրա ազդում են ոչ միայն մեծահասակի, այլև հասակակիցների կարծիքներն ու վերաբերմունքները: Նրանք ձգտում են շփվելու մեկը մյուսի հետ, տարբեր տեսակի հարաբերություններ հաստատելու՝ անձնային, ուսումնական, գործնական:

Կրտսեր դպրոցական տարիքի վերջում երեխաների շփման դրդապատճառները դուրս են գալիս ուսումնական գործունեության շրջանակներից: Ձևավորվում են ընկերական կողմնորոշված ներկայացվող յուրօրինակ պահանջները՝ ընկերոջ հանդեպ ուշադրություն, անշահախնդրություն: Շփման մեջ կարևորվում են ոչ միայն այն արժանիքները, որոնք կապված են կոնկրետ ուսումնական գործունեության կատարման հետ, այլև ամբողջապես երեխան, նրա բարոյական կերպարը: Մեծանում է ուսումնական գործունեությունից դուրս շփման բաժինն ու կարևորությունը՝ երեխաները սկսում են հասարակայնորեն կարևոր գործունեության տարբեր ոլորտներում նախաձեռնություն դրսևորել [8]:

Կրտսեր դպրոցականների միջանձնային հարաբերությունների հիմքում ընկած են միկրոխմբերը: Ավելի կայուն են երկու հոգու միջև հաստատվող կապերը, դրանք առանձնանում են ամրությամբ ու հուզականությամբ: Միաժամանակ ձևավորվում է նաև դասարանական կոլեկտիվը, որին բնորոշ են մյուս սոցիալական խմբերի հիմնական առանձնահատկությունները: Մասնավորապես այստեղ ևս առանձնանում են «հեղինակությունները» և «հեղինակությամբ չփայլող» երեխաները: Այս սահմանազատման վրա ներգործում են մի շարք գործոններ:

Մյուս՝ առավել կարևոր գործոնը երեխայի ուսումնական հաջողություններն են: Որպես կանոն «հեղինակություն» ունեցող երեխաները բարձր ընդունակություններ ունեն և լավ են սովորում դպրոցում: Թույլ կարողություններով երեխաները հաճախ ծիծաղի առարկա են դառնում կամ էլ պարզապես անտեսվում են:

Հասակակիցների կողմից երեխայի ընդունման նշանակալի գործոններից է նաև ուսուցչի կողմից տրվող հետադարձ կապը: Դասարանում բարձր կարգավիճակ են ձեռք բերում այն երեխաները, որոնք ամենից հաճախ են արժանանում ուսուցչի գովեստների: Պատժվող երեխաներին մյուսները չեն սիրում: Ընդհանրապես ուսուցչի վերաբերմունքը, հատկապես կրտսեր դպրոցական շրջանում, երեխաների համար կարևորագույն չափորոշիչ է հանդիսանում:

Յուրահատուկ բնույթ են կրում **կրտսեր դպրոցականի և ուսուցչի** փոխհարաբերությունները: Երեխան ձգտում է կատարելու բոլոր պահանջները, որոնք առաջադրում է մեծահասակը, ինչի գլխավոր նպատակը նրա կողմից դրական գնահատման արժանանալու մեծ ցանկությունն է: Ուսուցչի հեղինակությունը երբեմն ավելի ուժեղ է լինում, քան ծնողներիը, ուսուցչի կարծիքն ու վերաբերմունքը առաջատար նշանակություն են ձեռք բերում: Կրտսեր դպրոցականների կոլեկտիվում հաճախ արտահայտվում է «Ես և իմ ուսուցիչը» հարաբերությունների ոճը, ինչը զգալիորեն թուլացնում է հասակակիցների հետ հարաբերությունների համակարգը: Նրանք քիչ ուշադրություն են դարձնում հասակակիցների վրա, նրանց ավելի շատ հետաքրքրում է ուսուցիչը, նրա վերաբերմունքը իրենց կամ մեկ ուրիշի արարքի նկատմամբ, ցանկանում են ինչ-որ

բանով առանձնանալ մյուսներից և տպավորություն գործել ուսուցչի վրա: Առաջին դասարաններում հաճախ կարելի է տեսնել, թե ինչպես է երեխաներից ինչ-որ մեկը դժգոհում որևէ հասակակցից: Նրանց բոլոր գործողությունների հիմքում ընկած է ուսուցչի հավանությունը ստանալը, ակնհայտ է, թե որքան կարևոր է երեխաների համար ուսուցչի ցանկացած խոսքը: **Լ.Ի.Քոժովիչը, Ն.Գ.Մորոզովան, Լ.Ս.Սլավինան** ընգծում են, որ հաճախ այս տարիքում երեխաները չգիտեն իրենց համադասարանցիների գնահատականները և դրանցով չեն հետաքրքրվում, եթե ուսուցիչը չի առանձնացնում դրանք:

Այսպիսով, համադրելով նշված գործոնները և մեր կողմից կատարված որոշակի ուսումնասիրությունները, մենք եկանք այն եզրակացության, որ կրտսեր դպրոցական տարիքում երեխաների միջանձնային հարաբերություններում վճռորոշ է ուսումնական գործունեության դերը, ընկերների ընտրության հարցում նախապատվությունը տրվում է ուսուցչի գովեստներին արժանացած աշակերտներին և հարաբերությունները ևս հաստատվում են այդ ֆոնի վրա: Երեխաների համար կենտրոնականը ուսուցչի ուշադրությունն իրենց կողմը գրավելն է. դա նկատվում էր դասամիջոցներին, երբ միասին խաղալու փոխարեն նրանք հավաքվում էին ուսուցչի շուրջ: Համադասարանցիների հետ ընկերանալու կամ որևէ մեկի կողքը նստելու համար գերադասում էին նրանց, ովքեր լավ են սովորում և արժանանում են ուսուցչի գովեստին:

Վերը շարադրվածից ելնելով՝ փորձենք առանձնացնել կրտսեր դպրոցականի միջանձնային հարաբերությունների մի շարք հոգեբանական առանձնահատկություններ.

1. Միջանձնային հարաբերությունների կառուցման գործում որպես առաջատար ոլորտ հանդես է գալիս ուսումնական գործունեությունը:

2. Ընտանիքում փոխվում է երեխայի դերը՝ կապված նրա կողմից նոր սոցիալական կարգավիճակի յուրացման հետ. ծնող-երեխա հարաբերությունները սկսում են միջնորդավորվել երեխայի դպրոցական հաջողություններով:

3. Առաջին և երկրորդ դասարաններում առաջատար նշանակություն է ձեռք բերում ուսումնական պարտավորությունների կատարումը, երեխաներն առանձնանում են եսակենտրոնությամբ, հասակակիցների հետ կապերը իրադրային բնույթ են կրում, գլխավոր նպատակը հանդիսանում է ուսուցչի հավանությանն արժանանալը, նրա պահանջների կատարումը:

4. Եթե երեխաների միջև ի հայտ են գալիս որոշ նախընտրություններ, ապա դա պայմանավորվում է ուսուցչի վերաբերմունքներով ու կարծիքով: Դասարանում մեծ հեղինակություն են վայելում ուսուցչի կողմից «ամենասիրված» երեխաները:

5. Հասակակիցների նկատմամբ վերաբերմունքը պայմանավորվում է ուսումնական հաջողություններով: Սակայն երրորդ դասարանում արդեն սկսում են գնահատվել մարդու այլ որակները, նրա բարոյական կերպարը ամբողջությամբ վերցրած:

6. Աղջիկների և տղաների միջև շփումները գրեթե բացակայում են, աղջիկ-տղա տեսակի ընկերությունները շատ հազվադեպ են հանդիպում, դասարանը սեռային մասնատվածություն է ունենում:

7. Առաջին և երկրորդ դասարաններում թույլ են տարբերակված համադասարանցիների և այլ մարդկանց հետ հարաբերությունները, սակայն երրորդ դասարանում արդեն ձևավորվում է կոլեկտիվի լիարժեքության, համընդհանրության, այդ կոլեկտիվին պատկանելության զգացումը:

8. Կրտսեր դպրոցական տարիքի վերջում արդեն զգալի նշանակություն է ձեռք բերում հասակակիցների կարծիքը և վերաբերմունքը սեփական անձի նկատմամբ:

Կրտսեր դպրոցականների միջանձնային հարաբերությունների կարգավորման համար անհրաժեշտ ենք համարում հաշվի առնել մի քանի հանգամանքներ.

1. Նպաստել «ձնշված» աշակերտների սոցիալական կարգավիճակի բարձրացմանը, անցկացնել նրանց հետ անհատական աշխատանքներ նրանց բազմակողմանի զարգացման, հասակակիցների հետ շփման հմտությունների ձևավորման գործում: Մանկավարժական հարուստ փորձն ու գիտելիքները կնպաստեն մանկավարժական ու դաստիարակչական ճիշտ ներգործությանը, և, քանի որ ուսուցիչը երեխայի կողմից առանձնացվում է որպես հատուկ կարևորության անձ, ապա նա պետք է ոչ միայն գիտելիքներ հաղորդի, այլ նաև նպաստի երեխայի հարմարմանն ու ինտեգրացիային նոր միջավայրում:

2. Աշխատանքներ տանել կոլեկտիվի համախմբվածության հետագա զարգացման ուղղությամբ, նպաստել աշակերտների միջև ընկերական հարաբերությունների զարգացմանը: Ուսումնական հաջողություններն ու ուսուցչի հավասար ուշադրությունը բոլորի նկատմամբ կնպաստի երեխաների միմյանց նկատմամբ դրական վերաբերմունքին ու հարաբերություններին:

3. Ակտիվ հասարակական օգտակար աշխատանքներում ներգրավվել աշակերտներին: Անհրաժեշտ է անհատական մոտեցում յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ: Երեխաները ձգտում են ճիշտ կատարելու մեծահասակների հանձնարարությունները, և պետք է խրախուսել նրանց ջանքերը: Ծնողների հետ համատեղ պետք է բացահայտել ու զարգացնել երեխայի ընդունակություններն ու կարողությունները: Որպես կանոն՝ բարձր կարգավիճակ ձեռք են բերում այն աշակերտները, որոնք շատ են արժանանում ուսուցչի գովեստներից, ուստի ընդունակությունների զարգացումը կնպաստի ակտիվությանն ու ինքնարտահայտմանը:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Головин С.Ю. Словарь практического психолога, Минск 1998 - <http://vocabulary.ru>
2. Мясищев В.Н. Понятие личности в аспектах нормы и патологии, Самара, 1999, стр.197-244
3. Андреева Г.М. Социальная психология, М., 1998, стр.376
4. Обозов Н.Н. Психология межличностных отношений, М., 1990, стр.192
5. Պետրովսկի Ա.Վ. Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Եր., 1977, էջ 84-88:
6. Мухина В.Г. Возрастная психология, М., 1997, стр. 248-249
7. Петровский А.В. Социальная психология коллектива, М., 1978, стр.114-116
8. Матюхина М.В., Михальчик Т.С. Возрастная и педагогическая психология, М., 1999, стр.172-174

## ԱՄՓՈՓԱԳԻՐ

Կրտսեր դպրոցականների միջանձնային հարաբերությունների հոգեբանական առանձնահատկությունների մի քանի հարցեր

### Իննա Մկրտչյան

Միջանձնային հարաբերությունները մարդկանց ապրումների, նրանց բնավորությունների և ունակությունների փոխազդեցության համակարգն է, որի միջոցով իրականացվում են նրանց փոխադարձ գործունեությունը, շփումն ու զնահատումը, կառուցվում են վերաբերմունքների հիերարխիան, սպասումների և ձգտումների ամբողջությունը, սոցիալ-հոգեբանական մթնոլորտը:

Որպես կանոն՝ հարաբերությունների հաստատման, հետագա զարգացման ու ընդլայնման հիմքերն ու նախադրյալները դրվում են կրտսեր դպրոցական տարիքում: Այդ տարիքում միջանձնային հարաբերությունների ոճով է պայմանավորվում երեխայի անձի մի շարք հատկությունների ձևավորումը, դրվում են նրա կայացման ու զարգացման էական նախադրյալները:

*Բանալի բառեր՝ կրտսեր դպրոցական տարիք, միջանձնային հարաբերություններ, ընդունակություն, գործունեություն, անձ, սոցիալ-հոգեբանական մթնոլորտ, նախադրյալներ, զարգացում, ձևավորում:*

## РЕЗЮМЕ

Несколько вопросов психологических особенностей межличностных отношений младших школьников  
Инна Мкртчян

Межличностные отношения являются системой взаимодействия людей, их характера и способностей, через которую осуществляется совместная деятельность, обобщение и оценка, строится иерархия отношений, целостность ожиданий и стремлений, социально-психологическая атмосфера.

Как правило, дальнейшее развитие и расширение основ и предпосылок определения отношений закладывается в младшем школьном возрасте. В этом возрасте ряд особенностей формирования личности определяется стилем межличностных отношений, закладываются предпосылки для формирования и развития ребенка.

*Ключевые слова: младший школьный возраст, межличностные отношения, способность, деятельность, личность, социально-психологическая атмосфера, предпосылки, развитие, формирование*

**SUMMARY**  
**Some Questions of Psychological Features of the Interpersonal Relations**  
**of Junior Pupils**  
**Inna Mkrtchyan**

The interpersonal relations are the system of interaction of people, their characters and abilities. The interaction promotes their joint activity, makes communication and appreciation possible, builds the hierarchy of relations, the integrity of expectations and aspirations, the social-psychological atmosphere.

As a rule, the further development and the extension of the basis and preconditions of relations are cultivated at junior school age. At this age the capabilities of the individual development are determined by the style of interpersonal relations, are put the preconditions for the child's development and formation.

***Keywords:** primary school age, interpersonal relationship, ability, activity, personality, social-psychological atmosphere, prerequisites, development, formation.*